ՀՏԴ : 891.981 + 891.56 +398.22

Doi:10.54503/0135-0536-2025.2-137

# ՎԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԽԵՄԱՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՕՍԱԿԱՆ ԷՊՈՍՆԵՐՈՒՄ*

ՏՈՐՔ ԴԱԼԱԼՅԱՆ

**Բանալի բառեր՝** էպոս, քառաճյուղ կառուցվածք, ամպրոպային նախակերպար, երկվորյակներ, եռորյակներ, «միհրական» հերոս, գլխավոր վիշապամարտիկ հերոս, մեռնող-հառնող հերոս:

**Ամփոփում**

*Հայոց երեք էպոսները՝ ազգածնական, հեթանոսական ու միջնադարյան-քրիստոնեական, ինչպես և օսական «Նարթյան» էպոսը իրենց վերջնական ձևավորումը ստացել են պատմական տարբեր ժամանակաշրջաններում: «Հայկյանների» ազգածնական էպոսի ձևավորումն ավարտվել է մ. թ. ա. IX–VIII դդ., «Երգք վիպասանաց» կամ «Վիպասանք» հեթանոսական էպոսի կազմավորումը՝ մ. թ. ա. II – մ. թ. I դդ, իսկ «Սասնա ծռեր»-ը՝ վերջնական տեսք ստացել է գլխավորաբար IX–X դդ: Օսական «Նարթյան» էպոսի հիմնական կորիզը կազմավորվել է միջնադարում՝ XIII–XIV դդ., սակայն ամենահին սյուժեների ձևավորումը վերաբերում է սկյութական ժամանակաշրջանին՝ մ. թ. ա. VIII–VII դդ.: Համեմատական առասպելագիտության ու էպոսագիտության մեթոդի կիրառմամբ, մեր և այլ հետազոտողների նախկին աշխատանքների արդյունքները հանրագումարի բերելով, փորձ ենք անում հիմնավորելու այն տեսակետը, որ նշված բոլոր էպոսներում առկա է հերոսների հինգսերնդանի տոհմածառը և քառաճյուղ վիպաբանական կառուցվածքը, ընդ որում՝ բացի առաջին ճյուղից, մյուս բոլոր ճյուղերը հյուսված են մեկ գլխավոր հերոսի շուրջ: Ըստ այդմ՝ տրվում է յուրաքանչյուր սերնդի գլխավոր հերոսի առասպելաբանական նկարագիրը և ամեն մի էպոսում նրա վիպական արտահայտությունը՝ ա. ամպրոպային նախակերպար, բ. երկվորյակ / եռորյակ եղբայրներ, գ. արդարություն հաստատող հերոս, դ. գլխավոր վիշապամարտիկ, ե. մեռնող-հառնող հերոս: Բանաձևված եզրահանգումն այն է, որ նշված բոլոր էպոսներում առկա են հետևյալ քառաճյուղ կառույցները. «Հայկյանների» էպոսում՝ 1. Հայկ, Արամանյակ-Արամայիս, 2. Ամասիա / Գեղամ / Հարմա, 3. Արամ, 4. Արա Գեղեցիկ, «Երգք վիպասանաց»-ում՝ 1. Ծովինար, Տիգրան, 2. Սանատրուկ, 3. Արտաշես, 4.*

* *Ներկայացվել է 18. III. 2025 թ., գրախոսվել է 04. IV. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.: Հոդվածը գրվել է ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ 21AG-6A080 ծածկագրով գիտական նախագծի և «Քաղաքական և մշակութային գործիչների կերպարների վիպականացումն ու արտացոլումը բանահյուսության մեջ» բազային թեմայի շրջանակում:*

*© Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:*

*Արտավազդ, «Սասնա ծռեր»-ում՝ 1. Ծովինար, Սանասար-Բաղդասար, 2. Մեծ Մհեր, 3. Դավիթ, 4. Փոքր Մհեր, օսական «Նարթյան» էպոսում՝ 1. Վարխագ, Ախշար-Ախշարթագ, 2. Վըրըզմագ, 3. Բաթրաձ, 4. Սոսլան:*

**Նախաբան**

*Վերջին տարիներին հայոց էպոսների վերաբերյալ գրված մի շարք հետազոտությունների հեղինակներ փորձել են ընդհանրացնել և տեսականացնել այդ թեմային անդրադարձած նախորդ բանագետների ու էպոսագետների ուսումնասիրությունները[1]: Նշված նոր հոդվածներում ու գրքերում քննության են առնվել ոչ միայն մեր վերջին գրի առնված էպոսը՝ «Սասնա ծռեր»-ը, այլև նախորդ դարաշրջաններից հայտնի էպոսները՝ «Հայկյանների» մասին պատմող ազգածնական աւքերը, որոնք պահպանվել են հատվածաբար և խիստ պատմականացված շարադրանքով, ինչպես և «Երգք վիպասանաց» էպոսը, որից ունենք գրի առնված ամբողջական բանաստեղծական պատառիկներ:*

*Առասպելագիտական և էպոսագիտական համեմատական ուսումնասիրություններում, ի թիվս այլ հարցերի, նաև հատուկ առանձնացվել են որոշակի վիպաբանական սխեմաներ, որոնք ներհատուկ են մեր տարածաշրջանի էպոսներին[2]: Ընդ որում, այս սխեմաները վերաբերում են նաև կովկասյան էպոսներին, որոնցից հատկապես լավ է հետազոտվել օսական «Նարթյան» էպոսը: Առանձին հետազոտությամբ անդրադառնալով «Սասնա ծռեր»-ի և օսական «Նարթյան» էպոսի համեմատական քննությանը՝ ժամանակին փորձել ենք ձևակերպել ընդհանրությունների՝ այդ թվում վիպաբանական սխեմաների որոշակի ուրվագծեր, իսկ ավելի ուշ այդ համեմատությանն ավելացրել ենք նաև «Երգք վիպասանաց» կամ «Վիպասանք» էպոսի վիպաբանական սխեման[3]: Ընդհանուր եզրահանգումն այն է, որ ինչպես հայոց, այնպես էլ օսերի վիպաբանական մտածողությանը բնորոշ է գլխավոր հերոսների հետևյալ տոհմածառը՝ ա. ամպրոպային նախակերպար, որ հանդես է գալիս նախահոր կամ նախամոր տեսքով, բ. վերջինիս զավակները՝ ամպրոպային երկվորյակ կամ եռորյակ եղբայրները, գ. արդարություն հաստատող առաջին «միհրական» հերոս, դ. գլխավոր վիշապամարտիկ հերոս, որի կերպարն առանցքային է տվյալ էպոսում, ե. արդարության համար մարտնչող երկրորդ «միհրական»՝ մեռնող-հառնող կամ ժայռում փակված հերոս[4]:*

---

[1] *Հարությունյան. 2010, 139–148, Դալալյան. 2015, 58–65, Դալալյան. 2017, 38–53, Դալալյան. 2018, 134–135, Համբարձումյան. 2018, Պետրոսյան. 2018, 414–425, Համբարձումյան. 2020, 312–326:*

[2] *Պետրոսյան. 1997, 29–33, 74–76,* Петросян. 2002, 124–131.

[3] *Դալալյան. 2004ա, 82–87, Դալալյան. 2008, 43–44: «Վիպասանք» – «Սասնա ծռեր» – «Նարթյան» էպոս վիպաբանական կառուցվածքային ընդհանրությունը հետագայում փորձել է վերլուծել Ա. Պետրոսյանը հետևյալ հոդվածներում՝ Պետրոսյան. 2012, 16–19,* Петросян. 2014, 48–51.

[4] *Մոտավորապես նույն սկզբունքով՝ Ս. Հարությունյանը «Սասնա ծռեր»-ում առանձնացրել է չորս հիմնական առասպելներ՝ 1. երկվորյակների, 2. ամպրոպային հերոս – վիշապամարտիկի, 3. Միթրա-Միհր աստծո, 4. աստղա-արևային (Հարությունյան. 2004ա, 9), սակայն նա այս չորս առասպելների արձագանքները*

*Շատ հավանական է, որ այս հնգափուլ վիպական կառույցը զարգացած լիներ առավել պարզունակ և վաղնջական առասպելաբանական եռյակից, որը կազմված պետք է լիներ՝ ա. երկնային հին աստված, բ. երկվորյակ գլխավոր վիշապամարտիկ, գ. մեռնող-հառնող հերոս իրարահաջորդ սերունդներից[5]: Ամեն դեպքում, վիպաբանական-առասպելաբանական շղթան ավարտվել է «մեռնող-հառնող» հերոսով:*

## Էպոսների առանձնահատկությունները

*Հատկանշական է, որ «մեռնող-հառնող» կերպարով են եզրափակվում թե՛ «Հայկյանների», թե՛ «Երգք վիպասանաց», թե՛ «Սասնա ծռեր» էպոսների և թե՛ օսական «Նարթյան» ղիցավեպի հիմնական հերոսապատումները[6]: Սակայն «Սասնա ծռեր»-ի վերաբերյալ որոշ վիպասացներ տեղեկություններ են հաղորդել, որ այն շարունակվել է նաև «մեռնող-հառնող» կերպարի՝ Փոքր Մհերի ճյուղից հետո և, ընդհանուր առմամբ, բաղկացած է եղել 7 ճյուղից կամ նույնիսկ՝ 40 ճյուղից, որոնք ընկած են եղել երկվորյակների և Մեծ Մհերի միջև[7]: Հետևաբար՝ էպոսի գլխավոր հերոսների թիվը, վիպասացների համաձայն, նույնպես պետք է համապատասխան քանակով լիներ:*

*Այսուհանդերձ, հարկ է նշել, որ նման բազմաճյուղ կառույցներն ավելի շատ բնորոշ են խիստ պատմական էպոսներին և, հատկապես, ազգածնական ասքերին: Նմանաբնույթ ծննդաբանական շարքերի մեջ, մանավանդ՝ էպոսների գրքային-պատմականացված շարադրանքներում, հերոսների սերունդների թիվը սովորաբար ավելի շատ է լինում, բայց և այնպես դրանց մեջ վիպական մտածողությունը, որպես կանոն, առանձնացնում է վերոնշյալ հնգափուլ կառույցը՝ առավել վառ ու ընդգծված կերպարների միջոցով: Երբեմն էլ վիպաբանորեն առանձնացված այդ կերպարները կարող են իրենց մեջ խտացված պահել մի քանի պատմական դեմքերի գործերն ու հատկանիշները:*

*Այսպես, օրինակ, «Հայկյանների» էպոսի խորենացիական պատմական շարադրանքում թվարկվում է հերոսների 10 սերունդ, որոնց մեջ առանձնացվում են՝ թվացյալ ամպրոպային նախակերպարը՝ Հայկը, որին հաջորդում է Արամանյակ-Արամայիս ենթադրյալ «երկվորյակային» զույգը, այնուհետև՝ «միհրական» հերոս կարող են համարվել Ամասիան կամ Գեղամը կամ Հարման, իսկ ամպրոպային գլխավոր հերոսն ակնհայտորեն Արամն է, որին հաջորդում է իր որդի՝ «մեռնող-հառնող» կերպար Արա Գեղեցիկը: Պատմագիրներ Մար Աբաս Կատինայի (մ. թ. ա. II դ.) և Մովսես Խորենացու (V դ.) գրվածքներում ներառված՝ «Հայկյանների» էպոսի հատվածները V դարից հետո արդեն փոխանցվել են զուտ գրական ճանապարհով, և այժմ բավական դժվար է հստակ որոշել, թե*

---

*տեսնում է միաժամանակ տարբեր ճյուղերում, ըստ այդմ՝ տվյալ պարագայում խոսքը չի վերաբերում վիպաբանական սխեմային:*

[5] Петросян. 2002, 124–129.

[6] *Այստեղ միտումնավոր չենք քննարկում Հայոց միջնադարյան երկու նշանավոր վեպերը՝ «Պարսից պատերազմ»-ը և «Տարոնի պատերազմ»-ը, քանզի որոշակի բանագիտական չափանիշներից ելնելով՝ դրանք, թերևս, առավել ճշգրիտ կլիներ սահմանել որպես վիպաշար և ոչ էպոս: Այս տեսական սահմանազատման մանրամասնումը, սակայն, այլ հոդվածի նյութ է:*

[7] *Տե՛ս Սահակյան. 1975, 61–63:*

առաջին անգամ ո՛ր դարաշրջանում են դրանք գրի առնվել, մինչև ե՛րբ են բերանացի պատմվել ժողովրդի մեջ, ի՛նչ գեղարվեստական ձևերով ու հնարանքներով են վիպասվել, հերոսների կերպարներն ինչպե՛ս են խմբավորվել ու խտացվել, և էպոսի ժողովրդական տարբերակը քանի՛ հիմնական ճյուղերից է բաղկացած եղել: Ուշագրավ է, սակայն, որ «Հայկյաններ»-ից՝ Արամ դյուցազնին վերաբերող պատումների վերաբերյալ Խորենացին մի տեղ նշում է, որ «փոքր և աննշան մարդկանց» գուսանական երգերից քաղվել էին Արամի մասին քաջագործությունները և զետեղվել Մծբինի արքունի արխիվում, որտեղից էլ հետագայում օգտվել է Մար Աբասը[8]: Մ. Աբեղյանը, հիմնվելով Խորենացու համապատասխան հատվածի բանասիրական քննության վրա, կարծում է, որ այդ «գուսանական» պատմությունը, այլ խոսքերով ասած՝ երգվող էպոսն ընդգրկել է Հայկից մինչև Արամ բոլոր հերոսների մասին սխրագործությունները[9]:

Պատկերը զգալիորեն տարբեր է «Երգք վիպասանաց»-ի պարագայում: Սա Հայոց ամենահին գրի առնված էպոսն է, քանի որ այստեղ արդեն ունենք բանավոր էպոսից պահպանված ամբողջական բանաստեղծական պատառիկներ, որոնք համարյա բնագրով ներկայացնում են տվյալ ժամանակաշրջանի որոշ սաքերի ժողովրդական բնույթը: Ինչպես բառագիտական քննության հիման վրա նշում է Հ. Աճառյանը, փոխանցված հատվածների լեզուն ակնհայտորեն հարազատ է ժողովրդական երգիչների լեզվին, և մեծ է տարբերությունը Խորենացու «հետմեսրոպյան լեզվից»[10]: Նույն միտքը զարգացնում է Գ. Ջահուկյանը՝ քննելով «վիպասանական հայերենի» բառակազմական և շարահյուսական առանձնահատկությունները[11]: «Երգք վիպասանաց» էպոսում առանձնանում են հետևյալ չորս ճյուղերը՝ 1. Ծովինար և եռորյակներ, որոնցից կրտսերը Տիգրանն է, 2. Սանատրուկ, 3. Արտաշես, 4. Արտավազդ: Արտաշեսին թեև նախորդում են երկվորյակներ Երվանդն ու Երվազը, սակայն նախ՝ նրանք մաս չեն կազմում հերոսների ընդհանուր տոհմածառի, երկրորդ՝ նրանց մասին վիպական գործողություններով պատումները գրեթե բացակայում են, և գերակշռում են պատմական բնույթի տեղեկությունները, վերջապես՝ նրանք «գլխավոր վիշապամարտիկ հերոսի» հակառակորդներն են:

Ուշ գրառված էպոսներում՝ հայոց «Սասնա ծռեր»-ում և օսական «Նարթյան» դիցավեպում արդեն նշված հինգ սերունդներով տոհմածառը հստակ բյուրեղացած է, ընդ որում՝ ամպրոպային նախակերպարը հանդես է գալիս ոչ թե առանձին ճյուղով, այլ երկվորյակ եղբայրների հետ՝ ամենաառաջին ճյուղում: Հետևաբար, այդ երկու էպոսներն էլ ունեն միանման չորսճյուղանի կառուցվածք. «Սասնա ծռեր»-ում՝ 1. Ծովինար, Սանասար և Բաղդասար, 2. Մեծ Մհեր, 3. Դավիթ, 4. Փոքր Մհեր, իսկ «Նարթյան» էպոսում՝ 1. Վարխագ, Ախշար և Ախշարթագ, 2. Վըրըզմագ (և Սաթանա / Շաթանա), 3. Բաթրաձ, 4. Սոսլան /

---

[8] Խորենացի. 1981, I, ԺԴ, 58–59: Բնագրում «գուսանական»-ը գործածվում է գոյականաբար՝ բնորոշելով վիպասքերը. «Որպէս Մար Աբաս Կատինայ պատմէ՝ ի փոքունց ոմանց եւ յաննշանից արանց, ի գուսանականէն այս գտանի ժողովեալ ի դիւանի արքունեաց»:

[9] Աբեղյան. 1985, 267–270:

[10] Աճառյան. 1946, 168–169, Աճառյան. 1951, 70–71:

[11] Ջահուկյան. 1987, 368–370:

Սոզրըկո[12]: Իմաստաբանական ներքին առանձնահատկություններով հանդերձ՝ նշված չորս իրարահաջորդ ճյուղերը ստեղծում են տրամաբանական կուռ շղթա, որն արտահայտում է տվյալ հանրույթի սոցիալական զարգացման ընթացքի փուլայնությունը, և որն արդեն իսկ բնութագրվել է հետևյալ փուլային անվանումներով՝ 1. ծնունդ-արարում-աստվածայնություն, 2. կայացում-ամրացում-իշխանություն, 3. պաշտպանություն-հերոսականություն-հզորացում, 4. անկում-հեռացում-հավերժական կյանք[13]:

Օսական էպոսի առնչությամբ հարկ է նշել, որ այստեղ, բացի նշված հիմնական չորս ճյուղերից, կան նաև կարճառոտ երկրորդական ճյուղեր, ինչպես, օրինակ՝ Սըրդոն և Ացամազ անունով հերոսների շուրջ հյուսված, նաև՝ անկախ հերոսների շուրջ պատմվող բազմաթիվ ինքնուրույն պատումներ, որոնք կա՛մ առհասարակ չեն մտնում «Նարթյան» էպոսի ընդհանուր կառույցի մեջ, կա՛մ էլ առնչվում են բավական հպանցիկ: Բացի այդ, քանի որ «քարից ծնված» հերոս Սոսլանը համարվում էր Շաթանայի որդին, և նրա մասին գրառված վիպական պատումներն ու սյուժեները ամենաբազմաթիվն են, ուստի Սոսլանի ճյուղը օսական էպոսի համահավաք պատումում դրվել է Բաթրաձի ճյուղից առաջ, և հետևաբար՝ օսական էպոսի չորս ճյուղերը գիտական գրականության մեջ փոքր-ինչ այլ հերթականությամբ են թվարկվում[14]:

## Ամպրոպային նախակերպար

Սովորաբար էպոսները սկսվում են մի նախակերպարով, որը դառնում է դյուցազնապատումի նախահայրը կամ նախամայրը: Որպես կանոն, այս կերպարը էպոսի ամենաառասպելական և արխաիկ հերոսն է: Հաճախ այդ նախակերպարը կապված է լինում որևէ տոտեմ կենդանու հետ: «Սասնա ծռեր»-ում նախակերպարը Ծովինարն է, և ինչպես երևում է բանահյուսական-ազգագրական նյութի հետ համադրությունից՝ նրա խորհրդանիշ կենդանին վաղնջական ժամանակներում եղել է կովը, որն ըստ ժողովրդական հավատալիքների՝ ամպրոպի ժամանակ բառաչում է արնագույն Ծիրանի ծովից[15]: Կարմիր կովի մոտիվը բավական տարածված է նաև հայ ժողովրդական հեքիաթներում, որտեղ այս առասպելական կերպարը հանդես է գալիս որպես հալածված երեխա(ներ)ի հովանավոր[16] (հմմտ. Բաղդադի խալիֆայից հալածված երկվորյակ եղբայրների մասին սյուժեն «Սասնա ծռեր»-ի բազմաթիվ պատումներում):

Համեմատական քննությունը բերում է այն եզրահանգման, որ «Երգք վիպասանաց» էպոսի հնագույն տարբերակում նույնպես ամպրոպային նախակերպարը Ծովինարն էր, որին հաջորդող բ. կերպարը ոչ թե երկվորյակներ էին, այլ եռորյակներ[17]: Այս առումով «Երգք վիպասանաց»-ում կարելի է առանձնացնել հնագույն շերտ, որն էպոսի՝ մեզ հասած տարբերակում հանդես է գալիս

---

[12] Հմմտ. Դալալյան. 2004ա, 83:

[13] Հմմտ. Համբարձումյան. 2018, 77–79, Համբարձումյան. 2020, 325:

[14] Հմմտ., օրինակ, Абаев. 1978, 6–7.

[15] Այս նյութի վերաբերյալ գրականությունը և առասպելագիտական վերլուծությունը տե՛ս Դալալյան. 2008, 22–24:

[16] Հայրապետյան. 2010, 228–241:

[17] Այս մասին առաջին անգամ հպանցիկ ակնարկում է Ս. Հարությունյանը (տե՛ս Հարությունյան. 2004բ, 291):

կիսամթաքնված՝ ենթաշերտի տեսքով: Ասել է թե՝ Խորենացու պատմական շարադրանքում Տովինարի կողմից եռորյակ եղբայրների լույս աշխարհ բերելու հնագույն առասպելը հանդես է գալիս էպոսի միջնամասում և ներկայացվում իբրև Աժդահակի երազ[18]: Սակայն գործողությունների պատճառահետևանքային ժամանակագրական կարգը վերականգնելու դեպքում նշված առասպելը պետք է լիներ էպոսի ամենասկզբում: Ըստ այդմ, «Երգք վիպասանաց»-ի առաջին ճյուղը միանգամայն կարելի է կոչել «Տովինար և եռորյակներ», որոնցից կրտսերն ու ամենազորեղը Տիգրանն է: Վերջինիս հակառակորդ Աժդահակը Խորենացու շարադրանքում հենց ինքն է իր երազի միջոցով պատմում Տիգրանի ծննդյան առասպելական դրվագը[19]:

Օսական էպոսում հերոս-դյուցազունների՝ նարթերի նախահոր անունն է Վարխագ / Ուարխագ (Wærxæg). նա համարվում է տոհմածին երկվորյակների հայրը: Վ. Աբաևը համեմատական առասպելագիտության և լեզվաբանական ստուգաբանության տվյալներով հանգում է այն մտքին, որ Վարխագի անունը ծագել է սկյութական *varka- «գայլ» բառից: Գիտական այս վերակազմության հիման վրա նա գտնում է, որ «Նարթյան» էպոսի առաջին ճյուղի գլխավոր հերոսները՝ երկվորյակ եղբայրները, ունեն տոտեմական ծագում, և նրանց հայրը, ըստ էության, գայլն է կամ գայլային խորհրդանիշ ունեցող աստվածությունը[20]: Այսուհանդերձ, օսական էպոսի որևէ պատումում Վարխագի վերաբերյալ, բացի անվանաբանական հնարավոր ակնարկից, չկա պահպանված տոտեմական առասպել:

Մեկ այլ վարկածի համաձայն՝ Վարխագի անունը կարող էր ծագած լինել հին իրանական *vah(r)- / va(r)h- «հողմ, քամի» (ավեստերենում՝ *vərəθra- / *vārəθra- «խափանարար, արգելափակիչ») արմատից: Վարխագի առաջին կինը՝ ժայռերի աստծո դուստր Սայնագոնն էր (բառացիորեն՝ «ժայռային»), իսկ երկրորդ կինը՝ ծովային աստծո դուստր Ձերասան, որն օսական էպոսի տարբեր պատումներում պատկերվում է ձկնակերպ, աղավնակերպ և եղջերվակերպ: Համեմատական առասպելագիտության տվյալները բերում են այն եզրահանգման, որ Վարխագն օսական դիցաբանության մեջ անձնավորում էր բնության տարերային երևույթները, մասնավորապես՝ հողմն ու փոթորիկը: Այսպես, «Նարթյան» էպոսի առաջին ճյուղում նկարագրվում է, թե ինչպես է Վարխագն առևանգելով քշում-տանում նարթերի խոշոր եղջերավոր նախիրները, ծովում խեղդում նրանց կամ ցած նետում բարձրաբերձ ապառաժներից[21]:

Թվում է՝ օսական էպոսի «Վարխագն – Սայնագոն / Ձերասա» ամուսնական զույգը գործառութային հատկանիշներով համապատասխանում է «Սասնա ծռեր»-ի «Բաղդադի խալիֆ – Ծովինար» զույգին, որի երկրորդ անդամը հանդես է գալիս նաև «Երգք վիպասանաց»-ի հնագույն տարբերակում: Ինչ վերաբերում է «Հայկյանների» էպոսին, ապա դրա պատմականացված տարբերակում կանանց դրական կերպարներն արտացոլված չեն (բացառությամբ Նուարդի

---

[18] Այս մասին մանրամասն, գրականության հղմամբ տե՛ս Դ ա լ ա լ յ ա ն. 2008, 24–26, 44:

[19] Խ ո ր ե ն ա ց ի. 1981, I, ԻԶ, 90–91:

[20] А б а е в. 1938, 321, 328–329, 336; А б а е в. 1990, 305, 313, 319.

[21] Դ ա լ ա լ յ ա ն. 2004բ, 37, Դ ա լ ա լ յ ա ն. 2006, 48:

սոսկ հիշատակության), և ուստի կարելի է միայն ենթադրություններ անել, թե ով կարող էր լինել իրական ամպրոպային նախակերպարն այդ էպոսի՝ մեզ չհասած ժողովրդական անաղարտ տարբերակում:

## Երկվորյակ / եռորյակ եղբայրներ

«Սասնա ծռեր»-ում ամպրոպային նախակերպար Ծովինարը գերբնական հղիացմամբ ծննդաբերում է երկվորյակ եղբայրների, որոնցից ավագը և զորեղը Սասնա տան հերոսների անվանադիր-նախահայրն է: Բանագիտական քննությունը ցույց է տալիս, որ ավելի հնում գրի առնված «Երգք վիպասանաց» էպոսում Ծովինարը կամ նրա հետ նույնացվող դիցուհին լեռան գագաթին ծննդաբերում է եռորյակների[22], և այս պարագայում արդեն ամենազորեղը կրտսեր եղբայրն է: Ըստ էության, «Երգք վիպասանաց»-ի մեզ հասած տարբերակի առաջին ճյուղում եռորյակների մասին միակ սյուժեն նրանց ծննդյան դրվագն է, իսկ մնացած շարադրանքում հանդես է գալիս միայն երրորդ եղբայր Տիգրանը, որն իր քույր Տիգրանուհու և հակառակորդ Աժդահակի հետ կազմում է այս ճյուղի գլխավոր հերոսների եռանկյունին: Մյուս երկու եռորյակ եղբայրների մասին պատումներ չեն պահպանվել:

Օսական էպոսում նույնպես երկվորյակ եղբայրներից կրտսերը՝ Ախշարթագը, առավել զորեղ է, քան Ախշարը, ինչպես որ «Երգք վիպասանաց»-ում Տիգրանը եռորյակ եղբայրներից ամենակրտսերն ու ամենազորեղն է: Սակայն «Սասնա ծռեր»-ի հետ սյուժետային համեմատական քննությունից երևում է, որ օսական էպոսի կրտսեր եղբայր Ախշարթագը համապատասխանում է ավագ եղբայր Սանասարին, իսկ Ախշարը՝ Բաղդասարին: Ստորև առանձնացված 5 սյուժեների մեծ մասում (բացի բ.-ից) հստակ ի հայտ է գալիս նշված նմանությունը: Այսպես՝ ա) երկու էպոսներում էլ երկվորյակ եղբայրների հիմնական զբաղմունքը որսորդությունն էր. հայկական երկվորյակները, որսորդությամբ զբաղվելով, հասնում են Ծովի ափ, և Սանասարն իջնում է ջրի հատակը, իսկ Բաղդասարը սպասում է նրան ափին, նմանապես օսական երկվորյակները, որսի ժամանակ իրենց վիրավորած թռչնի արյան կաթիլների հետքերով հասնում են Ծով, Ախշարթագն իջնում է հատակը, իսկ Ախշարը սպասում է նրան ափին: բ) Երկու էպոսներում էլ երկվորյակ եղբայրներն ընդգծված դիցաբանական առնչություն ունեն ջրային տարերքի հետ, եղբայրներից մեկն իր ուժն ու զենքերը ստանում է Ծովի հատակից, սակայն «Սասնա ծռեր»-ում դա զորեղ եղբայր Սանասարն է, իսկ «Նարթյան» էպոսում՝ «ոչ-զորեղ» եղբայր Ախշարը: գ) Ստորջրյա կաթնաղբյուրը կամ կաթնալիճը է՛լ ավելի զորեղացնում ու հաղթանդամ է դարձնում Սանասարին և կենդանացնում է մարտում զոհված Ախշարթագին: դ) Երկու էպոսներում էլ զորեղ եղբայրն իջնում է ստորերկրայք կամ դրա հետ նույնացվող տարածք և ազատում գերության մեջ հայտնված եղբորը: ե) Երկվորյակ եղբայրները մենամարտում են միմյանց հետ գեղեցկուհու պատճառով. «Սասնա ծռեր»-ում՝ Դեղձուն Ծամի, իսկ «Նարթյան» էպոսում՝ Ծովային աղջկա: Հայոց էպոսում Բաղդասարը մենամարտում վիրավորվում է,

---

[22] Խ ո ր ե ն ա ց ի. 1981, I, ԻԶ, 88–89. կինը միաժամանակ ծնում է երեք դյուցազուններին՝ « … ծնաւ յանկարծ կինն երիս կատարեալս ի դիւցազանց հասակաւ և բնութեամբ … »:

*Սանասարին էլ թվում է, թե նա մեռել է, մինչ օսական որոշ պատումներում մի եղբայրը՝ զոհվում, իսկ Ծովի հատակին հզորացած մյուս եղբայրն ամուսնանում է Ծովային աղջկա հետ, սակայն այլ տարբերակներում երկու երկվորյակ եղբայրներն էլ զոհվում են*[23]*:*

*«Հայկյանների» էպոսում Արամանյակն ու իր որդի Արամայիսը համարվում են «երկվորյակային կերպար», ընդ որում՝ շատ հավանական է, որ էպոսի նախնական տարբերակում նրանք հանդես գային որպես երկվորյակ եղբայրներ՝ մայրաքաղաք Արմավիրի հիմնադիրներ ու անվանադիրներ, ինչպես որ Սանասարն ու Բաղդասարն են ներկայանում որպես Սասուն (Սանասուն) բերդաքաղաքի հիմնադիր-անվանադիրներ*[24]*: Օսական Ախշարի և Ախշարթագի վերաբերյալ քաղաք հիմնելու ավանդազրույց մեզ հայտնի չէ, սակայն նրանց հետ համեմատվող Հռեմոսն ու Հռոմուլոսը, լատինական ավանդազրույցի համաձայն, հիմնում են Հռոմ քաղաքը*[25]*:*

## Արդարություն հաստատող հերոս

*Քննարկվող էպոսների երկրորդ ճյուղը, որպես կանոն, հյուսվում է այս հերոսի շուրջ, որը սովորաբար զորեղ երկվորյակի որդին է լինում: Նա առաջին «միհրական» հերոսն է, բնութագրվում է հատկապես արդարություն և կարգուկանոն հաստատելու իր գործունեությամբ: «Սասնա ծռեր»-ում դա Առյուծաձև կամ Մեծ Մհերն է, որը Հ. Օրբելու բնորոշմամբ՝ «բոլոր հերոսներից ամենակատարյալն է, իր իսկ անվան մեջ պարունակում է իր կոսմիկական էության բացահայտումը»*[26]*: Մհերը ժառանգորդն է հեթանոսական Միհր աստծո, որի պաշտամունքը, բացի Հայաստանից, տարածված էր Հնդկաստանից մինչև Հռոմեական կայսրություն*[27]*: Մհերի կերպարը նախաքրիստոնեական Միհրի վերապականացված տարբերակ են համարել արդեն իսկ «Սասնա ծռեր»-ի առաջին պատումների գրառողները՝ սկսած Գարեգին Սրվանձտյանցից*[28]*: Թեև վերջինիս գրառած տարբերակն ունի եռաճյուղ կառույց՝ հերոսների հետևյալ տոհմածառով՝ «1. Սանասար-Աբամելիք, 2. Դավիթ, 3. Մհեր», այսինքն՝ Սրվանձտյանցի կատարած զուգահեռը վերաբերում է Փոքր Մհերին, սակայն մի քանի տարի անց Մ. Աբեղյանը նշում է, որ Մեծ Մհերն «իսկապես կրկնություն է Պստիկ Մհերի, և նրա վրա պատմվածները Սանասարի և Դավթի վրա պատմված*

---

[23] *Դ ա լ ա լ յ ա ն. 2004ա, 84–86: Օսական էպոսում Ախշարին ու Ախշարթագին հաջորդում են վերջինիս և Ծովային դիցուհու որդիները՝ նույնպես երկվորյակներ Խամըցն ու Վըրըըզմագը: Այս մոտիվը, երբ երկվորյակներից մեկն ունենում է նույնպես երկվորյակ որդիներ, հանդիպում է «Սասնա ծռեր»-ի մի քանի պատումներում, հնդկական «Մահաբհարատա» էպոսում և այլուր:*

[24] *Պ ե տ ր ո ս յ ա ն. 2024, 52:*

[25] *Հմմտ.* А б а е в. 1938, 317–337; А б а е в. 1990, 302–325.

[26] *Օ ր բ ե լ ի. 1956, 114:*

[27] *Հմմտ. Օ ր բ ե լ ի. 1956, 114–116, նաև՝ Մ ե լ ի ք - Օ հ ա ն ջ ա ն յ ա ն. 1946, 306–309:*

[28] *«Ուրեմն այս կերպով Մհեր կը լինի աշխարհի բաղդը դարձընող ու ոսկի բաշխող չաստուած մը. գուցէ Մհերն ինքն Միհր մեծն լինի, և իւր դուռը ուղղակի հարաւոյ հանդէպ կամ արեւու լինելով՝ պաշտելու պատշաճ» (Ս ր ո ւ ա ն ձ - տ ե ա ն ց. 1874, 135):*

*միջադեպերից կազմված կրկնություն է միայն»*[29]*: Այս պնդումից հետագա ուսումնասիրություններով հաստատվեց միայն այն մասը, որ վերաբերում էր երկու Մհերների միջև որոշ ընդհանուր գծերի առկայությանը:*

*Աբեղյանի՝ նշված թյուր կարծիքը հերքում է ինքն՝ իր իսկ հաջորդ նախադասությամբ, երբ գրում է. «Կարևոր դիցազնական գիծը, որ միայն այս (Մեծ — Տ. Դ.) Մհերի վրա է պատմված, որից և նա իր մականունն է ստացել, է մանուկ հասակում մի առյուծ սպանելը»: Առյուծասպանության առասպելը հելլենիստական Միհրի ամենաառանցքային հատկանիշներից էր, ուստի և Մեծ Մհերի կերպարը «Սասնա ծռեր»-ում կարելի է վստահաբար համարել ինքնուրույն ու անկախ կերպար: Մեծ Մհերը միայնակ արդար մարտիկ է՝ առանց զենք մենամարտում է առյուծի հետ, նաև «Սասնա ծռեր»-ի հերոսներից միակն է, որ դաշինք է կնքում հակառակորդի հետ, որով հիշեցնում է հնդիրանական Միհրի «Միթրա» դիցանվան բառացի նշանակությունն («դաշինք») ու գործառույթը*[30]*: Նա սանձում է իշխանությունը, առասպելում՝ սպանում իշխանության խորհրդանիշ առյուծին, բայց միևնույն ժամանակ նույնանում այդ իշխանությանը, քանի որ հռոմեական որոշ բարձրաքանդակներում Միհրը պատկերվում է առյուծի գլխով և մարդու մարմնով*[31]*: Քրիստոնեության օրոք հայոց հոգևոր երգերում՝ շարականներում, գործածվում է Միհրի բնորոշումը՝ «արեգակն արդարութեան», այն վերագրելով Քրիստոսին*[32]*:*

*«Երգք վիպասանաց» էպոսում Տիգրանից հետո երկրորդ գլխավոր հերոսը Սանատրուկն է, ով փորձում է արդարություն հաստատել և վերականգնել երկու մասի բաժանված Հայոց թագավորության ամբողջականությունը*[33]*: Մի հոդվածում, համեմատական առասպելագիտության և լեզվաբանության ընձեռած տվյալներով, փորձել ենք ցույց տալ, որ Սանատրուկի կերպարը կարող էր հնում կապված լինել Միհր-Միթրայի պաշտամունքին, և ինչպես որ «Սասնա ծռեր»-ում Միհրի կերպարը երկփեղկվել է երկու հերոսների՝ Մեծ և Փոքր Մհերների, այնպես էլ «Երգք վիպասանաց»-ում Սանատրուկը նախակարապետն է իր թոռան՝ Արտավազդի*[34]*: Ըստ Ա. Փերիխանյանի՝ «Սանատրուկ»-ը նախապես պետք է եղած լիներ արևային Խվարա աստվածության կամ Միթրա-Միհրի մակդիրներից մեկը, և նրա անվան ստուգաբանության ամենահավանական վարկածներից մեկն այն է, որ* *sānat-ruk *կազմությունը պետք է որ նշանակեր «լույսը բարձրացնող / ծագեցնող» կամ «ծագող լույս», ինչպես որ սողդերենում վկայված է* xvar-ā-sān *«արևածագ» բարդ բառը*[35]*: «Սանատրուկ — Արտա-*

[29] *Աբեղյան. 1966, 419:*

[30] *Հմմտ. Համբարձումյան. 2006, 99:*

[31] *Հմմտ. Հարությունյան. 2004ա, 13:*

[32] *Տե՛ս* Арутюнян. 1992, 160.

[33] *Խորենացի. 1981, II, ԼԴ, 184–185. «Յետ մահուանն Աբգարու բաժանի թագաւորութիւնն Հայոց յերկուս. քանզի Անանուն որդի նորա կապեաց թագ՝ թագաւորել յԵդեսիայ, և քեռորդի նորա Սանատրուկ՝ ի Հայս…», Խորենացի. 1981, II, ԼԵ, 186–187. «Սանատրուկ թագաւորեալ՝ զօրս ժողովէ… իջանել տալ պատերազմ ընդ որդիսն Աբգարու, գի բոլորումս տիրեսցէ թագաւորութեան»:*

[34] *Դալալյան. 2012, 67–68:*

[35] Периханян. 1993, 81–82.

վազդ» և «Մեծ Մհեր – Փոքր Մհեր» զույգերի առաջին անդամները, այդպիսով, խորհրդանշում են այգաբացը և արևի հզորանալ-բարձրանալը, մինչդեռ երկրորդ կերպարները՝ մայրամուտը[36]: Այս բնորոշումն է տվել Հ. Օրբելին «Սասնա ծռեր»-ում Մհերի կերպարի երկփեղկվածության առնչությամբ. «... առաջինը պապի կերպարն է, որն արտացոլում է ծագող արևի՝ ճաճանչափայլ և կենսալից արևի հատկանիշները, իսկ երկրորդը թոռան կերպարն է, որն արտացոլում է հոգնած՝ մայր մտնող արևի հատկանիշները»[37]:

Օսական «Նարթյան» էպոսում արդարություն հաստատող հերոս է Վըրըզմագը, որը գորեղ երկվորյակ Ախշարթագի որդին է: Վըրըզմագը գտնում է նարթերի կողմից արհամարհված ու անտեսված իր պապին, վերադարձնում նարթերի համայնք: Վըրըզմագն է միշտ գլխավորում նարթերի խորհրդատվական մարմինը՝ «նըխաս»-ը, ինչպես և՝ լինում սեղանապետ խնջույքների ժամանակ, կռվում է միաչքանի հսկայի հետ, արծվի վրա նստած ուղևորվում է անդրշիրիմյան աշխարհ և կատարում այլ քաջագործություններ[38]: «Հայկյանների» էպոսում, ենթադրաբար, «արդարություն հաստատող» կերպարներ կարող էին լինել Ամասիան կամ Գեղամը կամ էլ՝ Հարման, սակայն նրանց մասին, բացի իրենց անունների ստուգաբանության և տեղանվանական ավանդությունների վրա հիմնված որոշակի վերակազմություններից, պահպանված ավանդազրույցներ վկայված չեն:

## Գլխավոր վիշապամարտիկ հերոս

Այս հերոսի մենամարտը իր վիշապային հակառակորդի հետ կազմում է էպոսի «յուրային-օտար» հակադրության և հակամարտության հանգուցային սյուժեն («Սասնա ծռեր»-ում՝ խաչապաշտներ – կռապաշտներ, «Երգք վիպասանաց»-ում՝ հայեր – վիշապազուն մարեր): Ինչպես դիպուկ նկատում է Հ. Օրբելին՝ չորրորդ սերնդի այս հերոսը էպոսի հիմնական դեմքն է, որի սխրանքները գերիշխող ու կենտրոնական տեղ են գրավում էպոսում: «Սասնա ծռեր»-ում Դավիթը «օժտված է թե՛ իր նախնիներին՝ պապին ու հորը, թե՛ իր որդուն հատուկ բնավորության գծերով»[39]: Ս. Հարությունյանը համապատասխան սյուժեների քննությամբ հիմնավորապես ցույց է տվել Դավթի և Մսրա Մելիքի հակամարտության վիշապային բնույթը, երբ առաջինը հանդես է գալիս որպես տիպիկ առասպելական վիշապամարտիկ, իսկ երկրորդը՝ վիշապ: Թեև Ս. Հարությունյանը վիշապամարտի հատակ գծեր է ի ցույց դնում նաև Սանասարին ու Մեծ Մհերին վերաբերող դրվագներում, սակայն իրավամբ նշում է՝ վիշապամարտի լավագույն արտահայտությունն առկա է հենց երրորդ ճյուղում՝ Դավիթ – Մսրա Մելիք հակադրության մեջ[40]: Այս ճյուղը մյուս երեք ճյուղերից անհամեմատ ավելի տարածված էր. այն պատմել են գրեթե բոլոր վիպասացները (մինչդեռ մյուս ճյուղերը կարող էին բաց թողնվել). Դավթի

---

[36] *Դալալյան*. 2012, 68:

[37] *Օրբելի*. 1956, 115:

[38] Сказания о нартах. 1978, 59–60, 67–75.

[39] *Օրբելի*. 1956, 71–72:

[40] *Հարությունյան*. 1981, 76–80, 83, *Հարությունյան*. 2004ա, 11–12, հմմտ. նաև՝ Абрамян. 2012, 103–120.

շուրջն են համախմբվում վիպական-ավանդական բոլոր թեմաներն ու մոտիվները[41]:

«Երգք վիպասանաց» էպոսում Արտաշեսն է տիպիկ գլխավոր վիշապամարտիկը, թեև նրա հակամարտությունը վիշապազունների հետ սկիզբ է առնում դեռևս եռորյակ եղբայրներից ամենազորեղից՝ Տիգրանից, ինչպես որ «Սասնա ծռեր»-ում է երկվորյակ եղբայրներից զորեղը՝ Սանասարը, սկսում վիշապների դեմ պայքարը, իսկ այնուհետև այդ գործը շարունակում են Մեծ Մհերը և Դավիթը: «Երգք վիպասանաց»-ում Արտաշեսն արշավանքներ է կազմակերպում երկրի տարբեր ուղղություններով, հաղթում է վիշապային չար աչք ունեցող Երվանդին և նրա եղբորը՝ Երվազին, պատերազմում Ալանաց թագավորի դեմ, գերեվարում նրա որդուն և ամուսնանում թագավորի դստեր՝ Սաթենիկի հետ, կռվում է վիշապազունների դեմ ու կոտորում նրանց, ընդ որում՝ այս անցքերի մեծ մասը, Խորենացու վկայությամբ, վիպավել է Գողթան երգիչների աքերում[42]: Էպոսի պատմական շարադրանքում Արտաշեսը թեև Սանատրուկի անմիջական հաջորդը չէ, սակայն նրանց ժառանգական կապն ու հաջորդականությունը երևում է այն դրվագում, երբ Երվանդին հաղթելուց հետո Սմբատն արքունական գանձարանում գտնում է Սանատրուկի թագը և Արտաշեսին թագադրում Մեծ Հայքի արքա[43]:

Օսական էպոսում գլխավոր վիշապամարտիկը Բաթրաձն է, թեև նա ոչ թե «արդարություն հաստատող» հերոս Վըրըզմագի որդին է, ինչպես Դավիթը՝ Մեծ Մհերի, և Արտաշեսը՝ Սանատրուկի, այլ համարվում է Վըրըզմագի երկվորյակ եղբայր Խամըցի որդին: Այդուհանդերձ, Դավթի և Բաթրաձի նմանությունն ակնհայտ է, և դա արդեն իսկ նկատվել է մասնագիտական գրականության մեջ[44]: Ամեն դեպքում, Բաթրաձն օսական էպոսում ուղղակիորեն կապվում է Վըրըզմագի սերնդին՝ պարզապես վերջինիս եղբոր միջոցով. այսինքն՝ «արդարություն հաստատող» հերոսին հաջորդում է «գլխավոր վիշապամարտիկը», ինչպես համեմատվող մյուս էպոսներում: Ինչ վերաբերում է «Հայկյանների» էպոսին, ապա այստեղ աներկբա է, որ կենտրոնական վիշապամարտիկ հերոսը Արամն է, ով արշավանքներ է կատարում աշխարհի երեք ուղղություններով և ընդարձակում Հայոց երկրի սահմանները:

### Մեռնող-հառնող / ժայռում փակված հերոս

Այս հերոսին կարող ենք անվանել նաև երկրորդ «միհրական» հերոս. նա Հայոց բոլոր էպոսներում վառ արտահայտված կերպար է, նրանով են ավարտվում այդ էպոսները, սակայն ինքը՝ թեև արգելափակված, ողջ է մնում՝ այդպիսով վերածվելով «հավերժ ապրող» հերոսի և խորհրդանշելով կյանքի շարունակականությունն ու պատմական շրջափուլի կրկնելիությունը («Հայկյաններ»՝ Արա Գեղեցիկ, «Երգք վիպասանաց»՝ Արտավազդ, «Սասնա ծռեր»՝ Փոքր Մհեր): «Հայկյաններ»-ի Արան գլխավոր վիշապամարտիկ Արամի որդին է, նմանապես և «Երգք վիպասանաց»-ի Արտավազդը՝ Արտաշեսի, իսկ Փոքր Մհերը՝ Դավթի:

---

[41] Ս ա հ ա կ յ ա ն. 1975, 133:

[42] Հմմտ. Խ ո ր ե ն ա ց ի. 1981, II, ԽԹ, 208–209. «Արտաշիսի վերջնոյ գործք՝ բազում ինչ յայտնի են քեզ ի վիպասանացն, որ պատմին ի Գողթան – շինել գքաղաքն, և խնամութիւն ընդ Ալանս, և ծնունդք զարմիցն, և իբր տրփանք Սաթինկան ընդ Վիշապազունսն՝ առասպելաբար ...»:

[43] Խ ո ր ե ն ա ց ի. 1981, II, ԽԷ, 206–207:

[44] Տե՛ս Պ ե տ ր ո ս յ ա ն. 2012, 19, 22:

Հատկանշական է, որ «Երգք վիպասանաց»-ի Արտավազդը, ի տարբերություն Փոքր Մհերի և, հատկապես, Արայի, խիստ հակասական՝ երկվությամբ բնորոշվող կերպար է, և վիպական պատումներում հաղորդվում է անգամ երկու Արտավազդների գոյության մասին, որոնցից մեկը կարող էր ընկալվել որպես Արտաշեսի որդի, իսկ մյուսը՝ Արգավանի (քանի որ վերջինիս հետ էր Արտաշեսին դավաճանում իր կին Սաթենիկը): Նմանապես, օսական Սոսլանը ուներ իր բացասական հակոտնյան՝ Սըրդոնը, որն ամեն կերպ փորձում էր խանգարել ու վնասել Սոսլանին, ինչպես նաև գոյություն ունեին երկու Սաթանաներ՝ քաջքերի և նարթերի[45]:

Ըստ «Երգք վիպասանաց» էպոսի՝ Արտավազդը Մասիսի ստորոտում՝ Գինա ակունքների մոտ, վարազների և ցիռերի որսի ժամանակ «ինչ-որ ցնորքից» շփոթվում-խելագարվում ու ընկնում է խորը վիհի մեջ, որտեղ և փակված է մնում ու շղթայվում առասպելական էակների՝ քաջքերի կողմից: Այդպիսով կատարվում է Արտաշեսի անեծքը, որը մահամերձ ժամանակ (կամ ըստ այլ մեկնաբանության՝ մահանալուց հետո) անիծել էր Արտավազդին[46]: Ինչպես տեսնում ենք, Արտավազդի կերպարը համատեղում է ժայռին գամված հերոսի սյուժեի երկու բնորոշ գծերը՝ հայրամարտությունը և վնասարար «վիշապայնությունը»[47]: Մի շարք հետազոտողներ նշել են Արտավազդի կերպարի երկվությունը, ինչպես նաև՝ նրա առասպելի կապը որոշակի ժամանակագրական շրջափուլի ավարտի հետ: Արտավազդի հնարավոր դուրս գալը Մասիսի վիհից առնչվել է Ամանորին՝ Նավասարդի նախօրեին կամ առաջին օրվան, իսկ Խորենացու տարբերակում ծիսական տարեշրջանին փոխարինում է յոթնօրյա կամ շաբաթական շրջանը, ընդ որում՝ ժայռում փակված Փոքր Մհերին առնչվող առասպելական դրվագներում ևս վերապրուկի ձևով պահպանվել է հին տարեշրջանի գաղափարը[48]:

Եթե «Երգք վիպասանաց»-ում Արտավազդը Սաթենիկի որդին է, ապա օսական էպոսում Սոսլանը «հրաշալի հղիացմամբ» Սաթանայի / Շաթանայի որդին է, որը վերջնականապես ծնվում է քարից[49]: Այդպիսով, Սոսլանը դիցաբանական Միհրի նման տիպիկ «քարից ծնված» հերոս է, որն անհաջող կերպով փորձում է ամուսնանալ Արևի դստեր՝ Ացըրուխսի հետ, նրան հասնելու համար երկարատև ճամփորդություն կատարում անդրշիրիմյան աշխարհ, որպեսզի այնտեղից բերի Ազա ծառի տերևները: Քաջքերը նետերով սպանում են Սոսլանի նժույգին, իսկ Սոսլանը զոհվում է «արևային սկավառակ»-ից[50]: Ըստ մեկ այլ օսական պատումի՝ երբ Սոսլան-Սոզըրկոն որս էր անում, նրան բռնում են քաջքերը և մեխում պատին[51]: Այս բոլոր օրինակներում ակնհայտ են զուգահեռները թե՛ «Երգք վիպասանաց»-ի քաջքերի հետ, որոնք հանդես են գալիս որպես Արտավազդի հակառակորդներ, թե՛ «Հայկյաններ»-ի Անուշավան Սոսանվերի հետ, որը համարվում էր Արայան Արայի որդին և գուշակություններ էր կատարում սոսի ծառերի տերևներով, ընդ որում այդ սոսիների սրբազան

---

[45] Հմմտ. Դալալյան. 2002, 202–203, 209:

[46] Խորենացի. 1981, II, ԿԱ, 230–231. «Զսմանէ երգիչք Գողթան առասպելաբանեն այսպէս. եթէ ի մահուանն Արտաշիսի բազում կոտորածք լինէին ըստ օրինի հեթանոսաց …»:

[47] Աբրահամյան. 2004, 15:

[48] Հարությունյան. 2014, 12, 17:

[49] Տե՛ս Դալալյան. 2002, 202–203, Դալալյան. 2006, 49–51:

[50] Сказания о нартах. 1978, 117–244.

[51] Տե՛ս Դալալյան. 2002, 209, Դալալյան. 2006, 51–52:

*պուրակը գտնվում էր Արմավիրում՝ սեպագրային աղբյուրներից հայտնի Ազա երկրում: Ինչ վերաբերում է «արևային սկավառակ»-ին, ապա այն հար և նման է Փոքր Մհերի առասպելում ճակատագրական դեր կատարող Բախտի անիվին (Չարխի ֆալաք), որը ժամանակի առասպելաբանական մարմնավորումն է: Ուշագրավ է նաև վախճանաբանական ղրվագում նժույգի դերը, որը հանդես է գալիս թե՛ Սոսլանի, թե՛ Փոքր Մհերի և թե՛ Արտավազդի պատումներում:*

Եզրակացություն

*Այսպիսով, հերոսների հինգսերնդանի տոհմածառը և համապատասխանաբար քառաճյուղ վիպաբանական կառուցվածքը բնորոշ են հայկական և օսական էպոսներին: Պարտադիր չէ, որ այս ընդհանրությունն անպայմանորեն և բոլոր դեպքերում բացատրվի ցեղակցական կապերով ու ընդհանուր ծագումնաբանական հիմքով: Առհասարակ, վիպաբանական սխեմաներն արդյունք են առասպելաբանական աշխարհայացքին և որոշ առումով դրանից սերող գեղարվեստական մտածողությանը հատուկ կաղապարների համադրության, իսկ այդ կաղապարները կարող են պայմանավորված լինել մարդկային մտքի միանման աշխատանքով՝ անկախ որոշակի տարածաշրջանից: Այսպես, օրինակ, տեսակետ կա, որ վիպաբանական քառաճյուղ կառույցը տարածված է եղել հնուց առավել լայն տարածաշրջանում, և որպես դրա ապացույց բերվում է Հոմերոսի «Ոդիսական»-ի կերպարային համակարգի վերլուծությամբ առանձնացվող չորսսերնդանի կառույցը*[52]*: Այս միտքը գալիս է լրացնելու այն ընկալումը, որ առասպելն ու առասպելույթը հիմքն են վիպական և դրանից հետագայում զարգացած գեղարվեստական մտածողության: Ընդ որում, որքան տվյալ էպոսի ակունքները թաղված են վաղնջական ժամանակներում, այնքան առավել զգալի է առասպելաբանության ազդեցությունը*[53]*:*

Տորք Դալալյան – բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն, բանագիտության բաժնի վարիչ, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ-կովկասյան և հայ-իրանական բանագիտության, էպոսագիտության և լեզվաբանության խնդիրներ: Համահեղինակ է 2 գրքի, հեղինակ՝ ավելի քան 100 հոդվածի:
ORCID:0000-0002-8686-5341. tork.dalalyan@iae.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. Խ. 1966, Հայ վիպական բանահյուսություն. – Երկեր, հ. Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 572 էջ:

Աբեղյան Մ. Խ. 1985, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ. – Երկեր, հ. Ը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 66–272:

Աբրահամյան Լ. Հ. 2004, Բավիղ-լաբիրինթոս. արտավազդյան առասպելը Կովկաս-առաջավորասիական համատեքստում. – «Հայ ժողովրդական մշակույթ–XII» (հանրապետական գիտաժողովի նյութեր), Մեսրոպ արք. Աշճյանի հիշատակին, (խմբ.՝ Ս. Բ. Հարությունյան, Դ. Ս. Վարդումյան), Երևան, «Մուղնի» հրատ., էջ 13–18:

[52] *Տե՛ս Համբարձումյան. 2020, 323–324:*

[53] *Հմմտ.* Егиазарян. 2014, 125.

Աճառյան Հ. Հ. 1946, Փիպասանական հայերեն.– «Գրական-բանասիրական հետախուզումներ (Մանուկ Աբեղյանի հիշատակին)», գիրք 1 (խմբ.՝ Խ. Սարգսյան), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., էջ 161–174:

Աճառյան Հ. Հ. 1951, Փիպասանական հայերեն. – «Հայոց լեզվի պատմություն», II մաս, Երևան, Հայպետհրատ, էջ 65–75:

Դալալյան Տ. Ս. 2002, Հայոց վիպական Սաթենիկ թագուհու կերպարի ծագումնաբանության շուրջ. – ՊԲՀ, № 2, էջ 191–213:

Դալալյան Տ. Ս. 2004ա, «Սասնա ծռերի» և օսական «Նարթյան դիցավեպի» համեմատական քննության ուրվագծեր. – «Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը». միջազգային գիտաժողովի զեկուցումներ (խմբ.՝ Ա. Կ. Եղիազարյան, Ս. Բ. Հարությունյան և այլք), Երևան, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, էջ 82–87:

Դալալյան Տ. Ս. 2004բ, Օսական Wærxæg-ի և հայկական Վահագնի մասին.– «Հայ ժողովրդական մշակույթ–XII» (հանրապետական գիտաժողովի նյութեր), Մեսրոպ արք. Աշճյանի հիշատակին (խմբ.՝ Ս. Բ. Հարությունյան, Դ. Ս. Վարդումյան), Երևան, «Մուղնի» հրատ., էջ 37–39:

Դալալյան Տ. Ս. 2006, Դրվագներ հայ-ալանական դիցանվանական առնչություններից.– «Հայ ժողովրդական մշակույթ–XIII» (նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի), Դ. Ս. Վարդումյանի հիշատակին (խմբ.՝ Դ. Ս. Վարդումյան, Ս. Բ. Հարությունյան, Ս. Գ. Հոբոսյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 44–54:

Դալալյան Տ. Ս. 2008, «Փիպասանք» էպոսի առաջին ճյուղը և ամպրոպային դյուցազնատոհմի ծագումը. – «Շնորհի ի վերուստ. առասպել, ծես, իրականություն». հոդվածների ժողովածու՝ նվիրված Սարգիս Հարությունյանի 80-ամյակին (խմբ.՝ Ա. Ե. Պետրոսյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 19–50:

Դալալյան Տ. Ս. 2012, Հայոց «Փիպասանք» էպոսում Սանատրուկի կերպարը և նրա դիցաբանական զուգահեռները. – «Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը» (խմբ.՝ Ա. Ե. Պետրոսյան, Ա. Կ. Եղիազարյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 65–71:

Դալալյան Տ. Ս. 2015, «Փիպասանք» ժողովրդական դիցավեպի ավանդման եղանակները. – «Էջմիածին», թիվ Ժ, էջ 58–65:

Դալալյան Տ. Ս. 2017, Փիպասանական արուեստը, երաժիշտ-կատարողները եւ նուագարանները վաղմիջնադարեան Հայաստանում. լեզուա-մշակութաբանական ակնարկ.– «Հնչյուն եւ լռություն. երաժիշտը եւ նվագարանը դարերի հոլովույթում» (խմբ.՝ Հ. Վ. Պիկիչյան), Երևան, Կոմիտասի թանգարան-ինստիտուտ, էջ 38–53:

Դալալյան Տ. Ս. 2018, «Սասնա ծռեր»-ը և հայկական մյուս էպոսները. – «Հայաստանը՝ ծանոթ և անծանոթ. հանրագիտարան» (խմբ.՝ Ս. Դիլանյան, Վահան սարկավագ Սահակյան), Երևան, «Արեգ» հրատ., էջ 134–135:

Համբարձումյան Հ. Ա. 2006, Փոքր Մհեր. ծագումը և տիպաբանություն.– «Գրականագիտական հանդես», Ա (Ե), էջ 89–100:

Համբարձումյան Հ. Ա. 2018, «Սասնա ծռեր». պատում, մոտիվ, գրքային ավանդույթ (խմբ.՝ Ս. Բ. Հարությունյան), Երևան, ԵՊՀ հրատ., 320 էջ:

Համբարձումյան Հ. Ա. 2020, «Սասնա ծռեր» էպոսի կառուցվածքային համակարգի ձևավորումը. առասպելական սխեմանե՞ր, թե՞ գրական ավանդույթ.– «Գրականագիտական հանդես», թիվ 20/1, էջ 312–326:

Հայրապետյան Թ. Լ. 2010, Կարմիր կովի մոտիվը հայկական հրաշապատում հեքիաթներում. – ՊԲՀ, № 3, էջ 228–241:

Հարությունյան Ս. Բ. 1981, Վիշապամարտը «Սասնա ծռեր»-ում.– ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 11, էջ 65–85:

Հարությունյան Ս. Բ. 2004ա, «Սասնա ծռեր» հերոսավեպի առասպելաբանական հիմքերը.– «Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը». միջազգային գիտաժողովի զեկուցումներ (խմբ.՝ Ա. Կ. Եղիազարյան, Ս. Բ. Հարությունյան և այլք), Երևան, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, էջ 9–16:

Հարությունյան Ս. Բ. 2004բ, Петросян А. Е. 2002, Армянский эпос и мифология: истоки, миф и история. Ереван, Институт археологии и этнографии НАН РА, 239 с. – ՊԲՀ, № 1, էջ 291–294:

Հարությունյան Ս. Բ. 2010, Բանագիտական ակնարկներ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 263 էջ:

Հարությունյան Ս. Բ. 2014, Ժայռում փակված կամ ժայռին գամված հերոսի առասպելույթի դրսևորումները հայկական վիպական ավանդույթում.– «Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը» (խմբ.՝ Ա. Ե. Պետրոսյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 9–25:

Մելիք-Օհանջանյան Կ. Ա. 1946, Միթրա-Միհրի արքանյակներն ու գործակալները.– «Գրական-բանասիրական հետախուզումներ (Մանուկ Աբեղյանի հիշատակին)», գիրք 1 (խմբ.՝ Խ. Սարգսյան), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., էջ 269–327:

Մովսես Խորենացի. 1981, Պատմութիւն Հայոց (քննական բնագիրը՝ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմ. և ծանոթագրությունները՝ Ստ. Մալխասյանի), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 592 էջ:

Պետրոսյան Ա. Ե. 1997, Հայկական էպոսի հնագույն ակունքները, Երևան, «Վան Արյան» հրատ., 96 էջ:

Պետրոսյան Ա. Ե. 2012, Հայկական և հյուսիսկովկասյան նարթական էպոսների հարաբերությունը. – «Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը» (խմբ.՝ Ա. Ե. Պետրոսյան, Ա. Կ. Եղիազարյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 8–51:

Պետրոսյան Ա. Ե. 2018, Հայ ժողովրդական հերոսական էպոսը. – «Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ–1. հայ ժողովրդական մշակույթ XVII. ավանդականը և արդիականը հայոց մշակույթում», Երևան, ՀԱԻ հրատ., էջ 414–425:

Պետրոսյան Ա. Ե. 2024, Նոր քաղաքի հիմնման առասպելը հնդեվրոպական վիպական ավանդության մեջ. – «Էպոս, ինքնություն և մշակույթ». «Սասնա ծռեր» էպոսի ուսումնասիրության 150-ամյակին նվիրված միջազգային էպոսագիտական 6-րդ գիտաժողովի ամփոփագրերի ժողովածու (խմբ.՝ Տ. Ս. Ղալալյան), Երևան, ՀԱԻ հրատ., էջ 51–53:

Ջահուկյան Գ. Բ. 1987, Ստանդարտ լեզու և բարբառներ. «Վիպասանական հայերեն».– «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան», Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 364–371:

Սահակյան Ա. Շ. 1975, «Սասնա ծռերի» պատումների քննական համեմատություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 191 էջ:

Սրուանձտեանց Գ. Վ. 1874, Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհէրի դուռ, Կ. Պոլիս, Տպագրութիւն Ե. Մ. Տնտեսեան, 192 էջ:

Օրբելի Հ. Ա. 1956, Հայկական հերոսական էպոսը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1956, 139 էջ:

Абаев В. И. 1938, Опыт сравнительного анализа легенд о происхождении нартов и римлян.– «Памяти академика Н. Я. Марра» (отв. ред. И. И. Мещанинов). М.–Л., Изд. АН СССР, с. 317–337.

Абаев В. И. 1978, Нартовский эпос осетин: циклы, сюжеты, герои.– «Сказания о нартах». М., «Советская Россия», с. 5–42.

Абаев В. И. 1990, Избранные труды. Религия, фольклор, литература (отв. ред. и составитель В. М. Гусалов). Владикавказ, «Ир», 640 с.

Абрамян Л. А. 2012, Убийство Мсра Мелика в ритуально-мифологическом контексте.– «Армянский эпос и всемирное эпическое наследие» (ред. А. Е. Петросян, А. К. Егиазарян). Ереван, изд. «Гитутюн» НАН РА, с. 103–120.

Арутюнян С. Б. 1992, Михр.– «Мифы народов мира», М., «Советская энциклопедия», с. 160.

Егиазарян А. К. 2014, Эпическое повествование.– Армянский эпос и всемирное эпическое наследие. Ереван, Изд. «Гитутюн» НАН РА, с. 125–131.

Периханян А. Г. 1993, Материалы по этимологичекому словарю древнеармянского языка. Ереван, Изд. НАН РА, 144 с.

Петросян А. Е. 2002, Армянский эпос и мифология: истоки, миф и история. Ереван, Институт археологии и этнографии НАН РА, 239 с.

Петросян А. Е. 2014, Структурные связи армянских и осетинского эпосов.– «Армянский эпос и всемирное эпическое наследие». Ереван, Изд. «Гитутюн» НАН РА, с. 47–53.

Сказания о нартах. 1978. Осетинский эпос, издание переработанное и дополненное (перевод с осетинского Ю. Лебединского). М., «Советская Россия», 512 с.

## REFERENCES

Abaev V. I. 1938, Opyt sravnitel'nogo analiza legend o proishoždenii nartov i rimljan.- «Pamjati akademika N. Ja. Mara» (otv. red. I. I. Meŝaninov), Moskva-Leningrad, Izd. AN SSSR, s. 317–337 (In Russian).

Abaev V. I. 1978, Nartovskij épos osetin: cikly, sjužety, geroi. – «Skazanija o nartah», Moskva, «Sovetskaja Rossija», s. 5–42 (In Russian).

Abaev V. I. 1990, Izbrannye trudy. Religija, fol'klor, literatura (otv. red. i sostavitel' V. M. Gusalov), Vladikavkaz, «Ir», 640 s. (In Russian).

Abeghyan M. Kh. 1966, Hay vipakan banahyusut'yun.– Yerker, hator 1, Yerevan, HSSH GA hrat., 572 ej (In Armenian).

Abeghyan M. Kh. 1985, Hay zhoghovrdakan araspelnery M. Khorenats'u Hayots' patmut'yan mej.– Yerker, hator 8, Yerevan, ej 66–272 (In Armenian).

Abrahamyan L. H. 2004, Bavigh-labirint'os. artavazdyan araspely kovkas-araja-vorasiakan hamatek'stum.– «Hay zhoghovrdakan mshakuyt'–XII» (hanrapetakan gita-zhoghovi nyut'er), Mesrop ark'. Ashchyani hishatakin, khmb.` S. B. Harut'yunyan, D. S. Vardumyan, HH GAA HAI, Yerevan, «Mughni», ej 13–18 (In Armenian).

Abramjan L. A. 2012, Ubijstvo Msra Melika v ritual'no-mifologičeskom kontekste:- «Armjanskij épos i vsemirnoe épičeskoe nasledie» (red. A. E. Petrosjan, A. K. Egiazarjan), Erevan, izd. «Gitutjun» NAN RA, s. 103–120 (In Russian).

Acharyan H. H. 1946, Vipasanakan hayeren.– «Grakan-banasirakan hetakhuzumner (Manuk Abeghyani hishatakin)», girk' 1, khmb.` Kh. Sargsyan, Yerevan, HSSR GA hrat. [448 ej], ej 161–174 (In Armenian).

Acharyan H. H. 1951, Vipasanakan hayeren, «Hayots' lezvi patmut'yun», II mas, Yerevan, Haypethrat, ej 65–75 (In Armenian).

Arutjunjun S. B. 1992, Mihr. – «Mify narodov mira», Moskva, «Sovetskaja énciklopedija», s. 160. Egiazarjan A. K. 2014, Épičeskoe povestvovanie, «Armânskij épos i vsemirnoe épičeskoe nasledie», Erevan, Izd. «Gitutjun» NAN RA, s. 125–131 (In Russian).

Dalalyan T. S. 2002, Hayots’ vipakan Sat’enik t’aguhu kerpari tsagumnabanut’yan shurj.– PBH, № 2, ej 191–213 (In Armenian).

Dalalyan T. S. 2004a, «Sasna tsreri» yev osakan «Nart’yan dits’avepi» hamematakan k’nnut’yan urvagtser.– «Haykakan «Sasna tsrer» eposy yev hamashkharhayin epikakan zharangut’yuny»: mijazgayin gitazhoghovi zekuts’umner (khmb.՝ A. K. Yeghiazaryan, S. B. Harut’yunyan yev aylk’), Yerevan, HH GAA M. Abeghyani anvan grakanut’yan institut, Hnagitut’yan yev azgagrut’yan institut, ej 82–87 (In Armenian).

Dalalyan T. S. 2004b, Osakan Wærxæg-i yev haykakan Vahagni masin.– «Hay zhoghovrdakan mshakuyt’–XII» (hanrapetakan gitazhoghovi nyut’er), Mesrop ark’. Ashchyani hishatakin (khmb.՝ S. B. Harut’yunyan, D. S. Vardumyan), Yerevan, «Mughni», ej 37–39 (In Armenian).

Dalalyan T. S. 2006, Drvagner hay-alanakan dits’anvanakan arnch’ut’yunnerits’.– «Hay zhoghovrdakan mshakuyt’–XIII» (nyut’er hanrapetakan gitakan nstashrjani), D. S. Vardumyani hishatakin (khmb.՝ D. S. Vardumyan, S. B. Harut’yunyan, S. G. Hobosyan), Yerevan, HH GAA HAA «Gitut’yun», ej 44–54 (In Armenian).

Dalalyan T. S. 2008, «Vipasank’» eposi arajin chyughy yev ampropayin dyuts’aznatohmi tsagumy.– «Shnorh i verust: araspel, tses, irakanut’yun»: hodvatsneri zhoghovatsu՝ nvirvats Sargis Harut’yunyani 80-amyakin (khmb.՝ A. E. Petrosyan), Yerevan, HH GAA «Gitut’yun» hrat., ej 19–50 (In Armenian).

Dalalyan T. S. 2012, Hayots’ «Vipasank’» eposum Sanatruki kerpary yev nra dits’abanakan zugahernery.– «Haykakan eposy yev hamashkharhayin epikakan zharangut’yuny» (khmb.՝ A.Ye. Petrosyan, A. K. Yeghiazaryan), Yerevan, HH GAA «Gitut’yun» hrat., ej 65–71 (In Armenian).

Dalalyan T. S. 2015, «Vipasank’» zhoghovrdakan dits’avepi avandman yeghanaknery.– «Ejmiatsin», t’iv 10, ej 58–65 (In Armenian).

Dalalyan T. S. 2017, Vipasanakan aruesty, yerazhisht-kataroghnery yev nuagarannery vaghmijnadarean Hayastanum: lezua-mshakut’abanakan aknark:– “Hnch’yun yev lrut’yun: yerazhishty yev nvagarany dareri holovuyt’um” (khmb.՝ H. V. Pikich’yan), Yerevan, Komitasi t’angaran-institut, ej 38–53 (In Armenian).

Dalalyan T. S. 2018, «Sasna tsrer»-y yev haykakan myus eposnery.– «Hayastany, tsanot’ yev antsanot’: hanragitaran» (khmb.՝ S. Dilanyan, Vahan sarkavag Sahakyan), Yerevan, «Areg» hrat., ej 134–135 (In Armenian).

Hambardzumyan H. A. 2006, P’ok’r Mher: genezis yev tipabanut’yun.– «Grakanagitakan handes», A (Ye), ej 89–100 (In Armenian).

Hambardzumyan H. A. 2018, «Sasna tsrer»: patum, motiv, grk’ayin avanduyt’ (khmb.՝ S. B. Harut’yunyan), Yerevan, YePH hrat., 320 ej (In Armenian).

Hambardzumyan H. A. 2020, «Sasna tsrer» eposi karuts’vatsk’ayin hamakargi dzevavorumy.araspelakan skhemaner, t’e grakan avanduyt’? – «Grakanagitakan handes», t’iv 20/1, ej 312–326 (In Armenian).

Harut’yunyan S. B. 1981, Vishapamarty «Sasna tsrer»-um.– HH GA «Lraber hasarakakan gitut’yunneri», № 11, ej 65–85 (In Armenian).

Harut’yunyan S. B. 2004a, «Sasna tsrer» herosavepi araspelabanakan himk’ery.– «Haykakan «Sasna tsrer» eposy yev hamashkharhayin epikakan zharangut’yuny»: mijazgayin gitazhoghovi zekuts’umner (khmb.՝ A. K. Yeghiazaryan, S. B. Harut’yunyan yev aylk’), Yerevan, HH GAA M. Abeghyani anvan grakanut’yan institut, Hnagitut’yan yev azgagrut’yan institut, ej 9–16 (In Armenian).

Harut’yunyan S. B. 2004b, grakhosut’yun – Petrosjan A. E. 2002 menagrut’yan veraberyal.– PBH, № 1, ej 291–294 (In Armenian).

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal •2025 № 2

Harut’yunyan S. B. 2010, Banagitakan aknarkner, Yerevan, HH GAA «Gitut’yun» hrat., 263 ej (In Armenian).

Harut’yunyan S. B. 2014, Zhayrum p’akvats kam zhayrin gamvats herosi araspeluyt’i drsevorumnery haykakan vipakan avanduyt’um.– «Haykakan eposy yev hamashkharhayin epikakan zharangut’yuny» (khmb.` A. Ye. Petrosyan), Yerevan, «Gitut’yun», ej 9–25 (In Armenian).

Hayrapetyan T. L. 2010, Karmir kovi motivy haykakan hrashapatum hek’iat’nerum.– PBH, № 3, ej 228–241 (In Armenian).

Jahukyan G. B. 1987, Standart lezu yev barbarner. «Vipasanakan hayeren».– «Hayots’ lezvi patmut’yun. nakhagrayin zhamanakashrjan», Yerevan, HSSH GA hrat., ej 364–371 (In Armenian).

Khorenats’i. 1981, Movsisi Khorenats’woy Patmut’iwn hayots’ (k’nnakan bnagiry M. Abeghyani yev S. Harut’yunyani, ashkharhabar t’argm. yev meknabanut’yunnery St. Malkhasyani), Yerevan, YePH hrat., 592 ej (In Armenian).

Melik’-Ohanjanyan K. A. 1946, Mit’ra-Mihri arbanyaknern u gortsakalnery.– «Grakan-banasirakan hetakhuzumner (Manuk Abeghyani hishatakin)», girk’ 1, khmb.` Kh. Sargsyan, Yerevan, HSSR GA hrat., ej 269–327 (In Armenian).

Orbeli H. A. 1956, Haykakan herosakan eposy, Yerevan, HSSR GA hrat., 1956, 139 ej (In Armenian).

Perikhanyan A. G. 1993, Materialy po etimologichekomu slovaryu drevnearmyanskogo yazyka. Yerevan, Izd. NAN RA, 144 s. (in Russian).

Petrosyan A.Ye. 1997, Haykakan eposi hnaguyn akunk’nery, Yerevan, «Van aryan», 96 ej (In Armenian).

Petrosjan A. E. 2002, Armjanskij épos i mifologija: istoki, mif i istorija, Erevan, Institut arheologii i étnografii NAN RA, 239 s (In Russian).

Petrosyan A.Ye. 2012, Haykakan yev hyusiskovkasyan nart’akan eposneri haraberut’yuny.– «Haykakan eposy yev hamashkharhayin epikakan zharangut’yuny» (khmb.` A.Ye. Petrosyan, A.K. Yeghiazaryan), Yerevan, HH GAA «Gitut’yun» hrat., ej 8–51 (In Armenian).

Petrosjan A. E. 2014, Strukturnye svjazi armjanskih i osetinskogo éposov. – «Armjanskij épos i vsemirnoe épičeskoe nasledie», Erevan, Izd. «Gitutjun» NAN RA, s. 47–53 (In Russian).

Petrosyan A.Ye. 2018, Hay zhoghovrdakan herosakan eposy.– «Hnagitut’yan yev azgagrut’yan instituti ashkhatut’yunner–1: hay zhoghovrdakan mshakuyt’ XVII: avandakany yev ardiakany hayots’ mshakuyt’um», Yerevan, HAI hrat., ej 414–425 (In Armenian).

Petrosyan A.Ye. 2024, Nor k’aghak’i himnman araspely hndevropakan vipakan avandut’yan mej.– «Epos, ink’nut’yun yev mshakuyt’»: «Sasna tsrer» eposi usumnasirut’yan 150-amyakin nvirvats mijazgayin eposagitakan 6-rd gitazhoghovi amp’op’agreri zhoghovatsu (khmb.` T. S. Dalalyan), Yerevan, HAI hrat., ej 51–53 (In Armenian).

Sahakyan A. Sh. 1975, «Sasna tsreri» patumneri k’nnakan hamematut’yun, Yerevan, HSSH GA hrat., 191 ej (In Armenian).

Skazanija o nartah. 1978. Osetinskij épos, izdanie pererabotannoe i dopolnennoe (perevod s osetinskogo Ju. Lebedinskogo), Moskva, «Sovetskaja Rossija», 512 s (In Russian).

Sruandzteants’ G. V. 1874, Grots’ u brots’ yev Sasunts’i Dawit’ kam Mheri dur, K. Polis, Tpagrut’iun Ye. M. Tntesean, 192 ej (In Armenian).

# ОБЩИЕ ЭПИЧЕСКИЕ СХЕМЫ В АРМЯНСКИХ И ОСЕТИНСКОМ ЭПОСАХ

ТОРК ДАЛАЛЯН

Р е з ю м е

*Ключевые слова: эпос, четырехветвевая структура, громовой прото-персонаж, близнецы, тройняшки, «митраический» герой, главный герой-драконоборец, умирающий-воскресающий герой.*

В статье рассматриваются общие эпические схемы трех армянских эпосов: этногонического, языческого и средневеково-христианского, а также осетинского «Нартского» эпоса. Эти фольклорные памятники обрели свою окончательную форму в разные исторические эпохи. Формирование эпоса «Айкян» (Гайкиды) завершилось в IX–VIII вв. до н. э., языческий эпос «Ергк випасанац» («Випасанк») сложился во II в. до н. э. – I в. н. э., тогда как «Сасна Црер» окончательно сформировался главным образом в IX–X вв. Основное ядро осетинского «Нартского» эпоса сложилось в средневековье – в XIII–XIV вв., однако формирование древнейших сюжетов относится к скифскому языческому периоду, около VIII–VII вв. до н. э. На основе метода сравнительной мифологии и сравнительного эпосоведения сделана попытка обосновать точку зрения касательно того, что все перечисленные эпосы характеризуются пятипоколенным генеалогическим древом героев и четырехветвевой эпической структурой. В соответствующих подразделах приводятся мифологическое описание главного героя каждого поколения и его эпическое воплощение в указанных эпосах: а. Громовой прото-персонаж, б. братья-близнецы / тройняшки, в. герой, отстаивающий справедливость, г. главный драконоборец, д. умирающий-воскресающий герой. Основной вывод состоит в том, что указанные эпосы соответственно имеют следующие четырехветвевые структуры: 1. Айк, Араманяк-Арамайис; Амасиа / Гелам / Харма; Арам; Ара Гелецик; 2. Цовинар, Тигран; Санатрук; Арташес; Артавазд; 3. Цовинар, Санасар-Балдасар; Старший Мгер; Давит; Младший Мгер; 4. Уархаг, Ахшар-Ахшартаг; Вырызмаг; Батрадз; Сослан.

*Торк Далалян – к. филол. н., заместитель директора Института археологии и этнографии НАН РА, заведующий отделом Фольклористики, старший научный сотрудник отдела Общей и сравнительной лингвистики Института языка им. Р. Ачаряна НАН РА. Научные интересы: вопросы армяно-кавказской и армяно-иранской фольклористики, эпосоведения и языкознания. Соавтор 2 книг, автор более чем 100 научных статей.*
*ORCID: 0000-0002-8686-5341. tork.dalalyanl@iae.am*

# GENERAL EPIC SCHEMES IN THE ARMENIAN AND OSSETIAN EPICS

TORK DALALYAN

Summary

*Keywords: epic, four-branch structure, thunder proto-character, twins, triplets, "mithraic" hero, main dragon-fighting hero, dying and resurrecting hero.*

The article addresses general epic schemes of the three Armenian epics: ethnogonic, pagan, and medieval-Christian, as well as the Ossetian "Nart" epic. These folklore monuments received their final forms in different historical eras. The formation of the ethnogonic epic "Haikian" (Haikids) was completed in the 9th–8th centuries BC, the pagan epic "Ergk Vipasanats" ("Vipasank") was composed from the 2nd century BC – 1st century AD, while the medieval epic "Sasna Tserer" was finally formed mainly in the 9th–10th centuries. The main core of the Ossetian Nart epic was completed in the Middle Ages – in the 13th–14th centuries. However, the formation of its most ancient plots dates back to the Scythian pagan period, around the 8th –7th centuries BC. Based on the method of comparative mythology and comparative epic studies, an attempt was made to justify the point of view that a five-generation genealogical tree of heroes and a four-branch epic structure characterize all the listed epics. In the corresponding subsections, the mythological description of the main character of each generation and his epic incarnation in the epics are given: a. Thunder proto-character; b. twin brothers/triplets, c. justice-asserting hero, d. general dragon-fighter, e. dying-and-resurrecting hero. The main conclusion is that all mentioned epics have the following four-branch structures: 1. Hayk, Aramanyak-Aramayis; Amasia / Gelam / Harma; Aram; Ara Gełec'ik; 2. Tsovinar, Tigran; Sanatruk; Artashes; Artawazd; 3. Tsovinar, Sanasar-Baldasar; Elder Mher; Davit; Younger Mher; 4. Warxag, Axshar-Axshartag; Werezmag; Batradz; Soslan.

*Tork Dalalyan – Ph.D. in Philological Sciences, Deputy Director of the Institute of Archaeology and Ethnography of NAS RA, Head of Folklore Studies Department, Senior Researcher at the Departmen of General and Comparative Linguistics of the Institute of Language after H. Acharyan of NAS RA. Scientific interests: issues of Armenian-Caucasian and Armenian-Iranian folklore, epic studies and linguistics. Co-author of 2 books, author of more than 100 academic papers. ORCID:0000-0002-8686-5341. tork.dalalyanl@iae.am*